II

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Խաչակրաց արշավանքները պատմագրության մեջ արժանացել են ամենատարբեր, հաճախ նաև իրարամերժ գնահատականների: Նույնը վերաբերում է խաչակիրներ – մահմեդականներ մեծ հակամարտությանը: Իր հերթին դա անդրադարձ է ունեցել Կիլիկյան Հայաստանի պատմության որոշ դրվագներին տրված գնահատականներում:

Ուսումնասիրողների մոտեցումները հատկապես հակասական են, երբ անդրադառնում են խաչակրաց 3-րդ արշավանքին (1189–1192) և դրա հանդեպ Կիլիկիայի վերնախավի դիրքորոշմանը:

Խաչակրաց 3-րդ արշավանքի դրդապատճառները հանրածանոթ են: 1187 թ. Տիբերիական լճի մոտ, Հիթինի ճակատամարտում խաչակիրները ծանր պարտություն կրեցին, և սուլթան Սալահ ադ-Դինը գրավեց Երուսաղեմն ու Պաղեստինի մեծ մասը: Այս լուրը ծանր տպավորություն թողեց Եվրոպայում և առիթ հանդիսացավ խաչակրաց 3-րդ արշավանքի ձեռնարկման համար:

Արշավանքը ղեկավարում էին Հռոմեական սրբազան կայսրության տիրակալ Ֆրիդրիխ Ա Շիկամորուսը, Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Ա Օգոստոսը և Անգլիայի թագավոր Ռիչարդ Ա Առյուծասիրտը: Ռիչարդ և Ֆիլիպ թագավորների բանակը նավերով տեղափոխվեց Պաղեստին և պաշարեց Ակրան, իսկ Ֆրիդրիխ Շիկամորուսը մեծաթիվ բանակով դեպի Սուրբ Երկիր ուղղվեց ցամաքային ճանապարհով: Մեծ դժվարություններ հաղթահարելով՝ գերմանական բանակը, արդեն զգալիորեն նվազած, հասավ Իկոնիա՝ Սելջուկյան սուլթանության մայրաքաղաքը:

Այդ ժամանակ Կիլիկիայում, որի կենտրոնը Սիսն էր, իշխում էր Լևոն Բ իշխանապետը: Հայոց կաթողիկոսն էր Գրիգոր Դ-ը կամ Գրիգոր Տղան՝ աստվածաբան, բանաստեղծ և պետական ականավոր գործիչ, որի նստավայրը Հռոմկլա ամրոց-կաթողիկոսարանն էր Եփրատի ափին: Հայոց կաթողիկոսները սկսած Գրիգոր Գ Պահլավունուց (1150) այստեղ իշխում էին որպես ինքնիշխան ավատատերեր:

Ռուբինյան իշխանությունը պատրաստ էր հռչակվելու թագավորություն: Դա հնարավորություն կտար Ռուբինյան տոհմի պարոններին ոչ միայն օրինականացնելու տիրապետությունն արդեն փաստացի իրենց ենթակա տիրույթներում, այլև դուրս գալու նաև Կիլիկիայի սահմաններից, իսկ հետագայում, գուցե նաև իշխելու Մեծ Հայքում, քանի որ «Թագավոր Հայոց» (և ոչ թե «Թագավոր Կիլի-

կիոյ») տիտղոսը նրանց տալու էր այդ իրավունքը: Ուստի Կիլիկիայի վերնախավն ակնկալում էր թագ ստանալ, այսինքն՝ ճանաչվել իբրև անկախ թագավորություն որևէ մեծ տերության կողմից: Մինչև XII դարի 70-ական թվականները առավել տրամաբանական կլիներ Բյուզանդիայի կողմից ճանաչումը, մանավանդ որ Կիլիկիան նախկին կայսերական նահանգ էր:

Գրիգոր Տղան գահին բազմեց 1173-ին և հայոց եկեղեցու հոգևոր պետը եղավ ամբողջ մի քսանամյակ: Մինչև 1180 թ. հայ և հույն եկեղեցիները գտնվում էին շատ ակտիվ կապերի մեջ, հրավիրվում էին ժողովներ, քննարկումներ, և դրանց հիման վրա վարվում էր աշխույժ նամակագրություն հանուն երկու եկեղեցիների մերձեցման կամ միության՝ փորձելով հասնել փոխհասկացողության, մի կողմ դնելով կամ սրբագրելով միմյանց դավանանքի վերաբերյալ թյուր կամ աղավաղված հասկացությունները, իսկ էական հարցերում հասնելու փոխադարձաբար ընդունելի տարբերակների: Ընդ որում, Գրիգոր Տղան թեև շատ լավ գիտակցում էր, որ բյուզանդացիների ազդեցությունը թուլացել էր Կիլիկիայում, բայց մտահոգ էր Փոքր Ասիայում բնակվող հայերով, որոնց հանդեպ պարբերաբար հալածանքներ էին կիրառվում Բյուզանդիայի կողմից: Նա փորձում էր իր այս մտահոգությունները հասցնել նաև, այսպես ասած, «Արևելյան ընդդիմությանը» կամ Հայաստանի հոգևորականությանը, որոնք հեռու գտնվելով բյուզանդական Փոքր Ասիայից, առանձնապես կարևորություն չէին տալիս Գրիգոր Տղայի մտահոգություններին և, կարծր դիրք գրավելով, սահմանափակում էին հույների հետ համաձայնության գալու հնարավորությունները: Սակայն անկախ վերջիններիս դիրքորոշումից, հայ-հունական բանակցություններն ընդհատվեցին Բյուզանդիո Մանուել Կոմնենոս կայսեր մահով 1180-ին, որը հիմնական դերակատարն էր այդ բանակցություններում (նույնիսկ ավելի, քան Կոստանդնուպոլսի պատրիարքը): Բանն այն է, որ Մանուել կայսեր մահից հետո՝ գրեթե հինգ տարի, կայսրության արքունիքում անկայուն իրավիճակ տիրեց, մինչև որ 1185-ին գահին բազմեց Իսահակ Բ Անգելոսը: Սակայն հույների հետ բանակցություններն այլևս դադարեցին: Նոր կայսրը ոչ միայն փորձ չկատարեց վերականգնելու բանակցությունները, այլև իր իշխանության տակ գտնվող հայերին բռնությամբ քաղկեդոնական դարձնելու նպատակով հալածանքներ սկսեց:

Մեր կարծիքով՝ բանակցությունների դադարեցման պատճառը ոչ միայն բյուզանդացիներն էին, այլև՝ հայերը: Այդ թվականներին արդեն հայոց կողմից էլ պակասել էր սկսված գործընթացը շարունակելու և տրամաբանական վախճանին հասցնելու ձգտումը: Ի վերջո, հարցը դավանաբանականից ավելի քաղաքական էր: Իսկ քաղաքական իրավիճակը փոխվում էր ի վնաս կայսրության և հունաց եկեղեցու:

1176-ին Միրիոկեֆալոնի ճակատամարտում ծանր պարտություն կրելով Իկոնիայի սելջուկներից, բյուզանդացիները, փաստորեն, հրաժարվել էին Արևելքի երկրների հանդեպ նվաճողական ծրագրերից: Ճիշտ է, Դաշտային Կիլիկիայի որոշ մասեր ևս մի քանի տարի մնացին բյուզանդացիների տիրապետության տակ, սակայն այլևս Բյուզանդիան վճռական դեր չէր խաղալու Կիլիկյան Հայաստանի պատմության մեջ:

Ահա թե ինչու Լևոն իշխանապետն ու Գրիգոր Դ-ը նամակներ ուղարկեցին Հռոմի քահանայապետին ու գերմանական կայսերը՝ խնդրելով ճանաչել Կիլիկիայի անկախությունը: Մինչ Բյուզանդական կայսրությունը քայքայվում էր (իսկ 1204-ին ժամանակավորապես վերացվեց լատինների կողմից), իսկ հունադավան եկեղեցին կորցնում էր իր ազդեցությունը, Հռոմեական եկեղեցին իր ազդեցությունն էր տարածել ողջ Եվրոպայում, նրա գերագահությունն էին ընդունել բազմաթիվ հզոր տիրակալներ:

Եթե հիմք ընդունենք 1944 թ. լույս տեսած բազմահատոր հրատարակությունը[1]*, որտեղ զետեղված է Հռոմի քահանայապետերի ողջ գրագրությունը Արևելքի երկրների հոգևոր ու աշխարհիկ պետերի հետ, ապա Կիլիկիայի հայերի և Հռոմի պապերի միջև ամբողջական ու պահպանված նամակագրությունը սկսվում է 1199 թ.՝ Ինովկենտիոս Գ պապից (1198-1216): Սակայն, անտարակույս, այդ թղթակցությունները սկսվել են ավելի վաղ՝ առնվազն Ղուկիոս Գ-ի (1181–1185) օրոք և շարունակվել հատկապես Կղեմես Գ (1187–1191) օրոք: Ցավոք, այդ նամակները չեն պահպանվել, բայց դրանց մասին վկայում են պատմական աղբյուրները, որոշ դեպքերում ամբողջությամբ կամ հատվածաբար, կամ էլ թարգմանաբար մեջբերելով դրանք: Երբեմն էլ պարզապես մնում է ենթադրություններ անել պատասխան գրությունների մասին՝ գուշակելով դրանց բովանդակությունը: Այս առթիվ բավական հանգամանալից գրում է հայր Միքայել Չամչյանցը՝ հիմնականում հենվելով Ներսես Լամբրոնացու տեղեկությունների վրա*[2]*:*

Գրիգոր Տղայի քսանամյա գահակալությունը նշանակալից է նաև նրանով, որ երևան է հանում կողմնորոշման որոշակի փոփոխությունը: Հենց նրա օրոք 1184-ին Ղուկիոս Գ պապին է հասնում կաթողիկոսի նամակը, որից հետո սկիզբ են առնում հայ-լատինական աշխույժ կապերը: Հենց 1184–1185 թթ. պետք է համարել հայ-հունական եկեղեցական մերձեցման վերջնական խզումն ու հայ-լատինական սերտ հարաբերությունների սկիզբը:

Վարդան պատմիչի վկայությամբ՝ «Առաքէր և նոյն պատրիարգն եպիսկոպոս մի՝ Գրիգոր անուն, ի պապն Հռոմայ վասն վտանգին որ ի Յունաց կրէին Հայք…»[3]*: Նույն տարում հասնում է պատասխանը, որը պարունակում էր ծիսական որոշ փոփոխությունների վերաբերյալ հանձնարարություններ: Իսկ արդեն 1189-ին Կղեմես Գ-ն էր նախաձեռնողը վերականգնելու նամակագրությունը Հայոց կաթողիկոսի հետ, որի նպատակը, անշուշտ, արդեն սկսված արշավանքի ժամանակ հայերի կողմից խաչակիրներին ցուցաբերվելիք աջակցության ապահովումն էր: Ընդ որում, հայերին պապը ճանաչում է որպես «ի հաւատ կաթողիկէ հաստատեալ», թեև այդ ուղղությամբ հայերը որևէ քայլ չէին արել անցած հինգ տարիների ընթացքում: Նույն բովանդակությամբ մի նամակ էլ ուղարկեց պապը Լևոն իշխանապետին: Սրանց ի պատասխան կաթողիկոսն ու իշխանա-*

---

[1] Pontificia commisio ad redigendum codicem iuris canonici orientalis, Fontes, Series III, v. II, Acta Innocentii p. III (1198-1216). Vatican,1944.

[2] *Մ. Չ ա մ չ ե ա ն ց. Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Չ ա մ չ ե ա ն ց), հ. Գ, Վենէտիկ, 1786, էջ 152-159:*

[3] *Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն Տիեզերական (այսուհետև՝ Վ ա ր դ ա ն), Մոսկվա, 1861, էջ 175:*

պետը ուղարկեցին իրենց գրությունները, որոնք, ամենայն հավանականությամբ, դրական բովանդակություն ունեին:

Ահա այս ամբողջ նախապատմությունն արդեն առկա էր, երբ Ֆրիդրիխ Շիկամորուսն իր բանակով հասավ Կիլիկիայի սահմաններին, և հայոց հոգևոր ու աշխարհիկ պետերը պետք է արագ կողմնորոշվեին, թե ինչ դիրքորոշում որդեգրեն:

Տեսնենք, թե ինչ է ասում Վարդան Արևելցին. «Եւ երիցս անգամ դեսպան յղեաց առ Լեւոն եւ հատաւ առ նա: Եւ իբրեւ ել յԻկոնէն՝ եհաս գիր ի պատրիարգէն Գրիգորոյ. «Եթէ եկաք մեք ի Սիս քաղաք և մնամք քեզ աստ»[4]: Այս հաղորդումը նախ ցույց է տալիս, որ կաթողիկոսը շտապել է Սիս մայրաքաղաք հետագա քայլերի մասին խորհրդակցելու Լևոն իշխանապետի հետ, ըստ երևույթին, վերջինիս հրավերով: Ապա նաև շատ հատկանշական է, որ կայսրի՝ երեք անգամ ուղարկած դեսպաններն այդպես էլ չեն կարողանում հանդիպել Լևոնին: Սա փաստում է միայն մի բան, որ իշխանապետը սկզբում խուսափել է անձնական հանդիպումից: Չի բացառվում, որ հենց Լևոնն է, որ Գրիգոր Դ-ին հրավիրելով Սիս՝ առաջարկում է մի նամակ գրել կայսրին՝ մեղմելու վերջինիս հնարավոր զայրույթը կամ վրեժխնդրությունը:

Վերադառնանք Վարդան Արևելցու «Տիեզերական պատմութեան»-ը ու հետևենք նրա շարադրանքին: Երբ խաչակիրներին է հասնում կաթողիկոսի նամակը, այն ընդունվում է մեծ խանդավառությամբ: Պատասխան նամակում կայսրը խոստանում է, որ իր հետ բերած թագով ու զգեստով կաթողիկոսը կարող է օծել «Թագաւոր Հայոց», ում ինքը՝ կաթողիկոսը, կկամենա. «Ահա ունիմ թագ և զգեստ, զի օծցես թագաւոր Հայոց զով որ ընտրես»[5]:

Ակնհայտ է, որ նախկինում Եվրոպա ուղարկված նամակներում (Կղեմես Գին ուղարկված պատասխաններ) կաթողիկոսը կամ իշխանապետը (կամ երկուսն էլ) արծարծել են Կիլիկիայի անկախության ճանաչման ու Լևոնի թագադրման հարցը: Ֆրիդրիխի նամակն այն տպավորությունն է ստեղծում, կարծես թե թագն ու զգեստը նա պատրաստ բերում էր իր հետ հատուկ Լևոնի համար, մինչդեռ սա, ըստ երևույթին, հայերին սիրաշահելու հնարք էր՝ հաշվի առնելով խաչակիրների ոչ նախանձելի վիճակն ու հայ իշխանապետի զգուշավորությունը, որը, անկասկած, արդեն նկատվել էր կայսրի կողմից: Դրա ապացույցն է այն, որ երբ Ֆրիդրիխն անսպասելիորեն խեղդվեց Սելևկիա գետում, ու նրան փոխարինեց որդին, վերջինս խուսափեց Լևոնին թագադրել, ինչը մտածել է տալիս, որ Ֆրիդրիխի ակնարկը նամակի մեջ վերջին պահին հղացված մի գաղափար էր, և, թերևս, ոչ մի պատրաստի թագ ու զգեստ էլ չկար: Մի բան, որ Չամչյանցը փորձում է բացատրել կայսրի որդու սգավոր լինելով կամ խաչակիրների շտապողականությամբ. «Եւ ի նոյն աւուրս ի լինել խօսակցութեան ընդ կաթողիկոսն և ընդ լատինս՝ թէպէտ և յօժարեցաւ որդի կայսերն խորհրդակցութեամբ իշխանաց և եպիսկոպոսաց իւրոց կատարել զխոստումն հօր իւրոյ՝ թագ կապել Լեւո-

[4] *Նույն տեղում, էջ 178-179:*

[5] *Նույն տեղում, էջ 179:*

նի և կարգել գնա հանդիսիւ արքայ Հայոց, բայց ոչ յաջողեցաւ ի սակս սգոյն՝ զոր ունէին, մանաւանդ զի փութային գնալ ի գործն՝ յոր եկեալ էին»[6]:

Ի վերջո, Ֆրիդրիխի և իր որդու տարբեր մոտեցումները կարող են ունենալ նաև մի շատ պարզ բացատրություն: Առաջինի դեպքում խաչակիրները դեռ Կիլիկիա չէին մտել, չգիտեին ինչ վերաբերմունքի կարժանանան, բանակը հոգնած էր, քաղցած, չկար անասնակեր, զինվորները ստիպված էին մորթել հազարավոր ձիեր ու սնվել դրանց մսով, մինչդեռ կայսրի որդու գլխավորությամբ նրանք արդեն անցել էին Իսավրիան ու Կիլիկիայի մեծ մասը, Լևոն Բ-ը նրանց ապաստան էր տվել, ապահովել էր պարենով ու անասնակերով[7]: Ահա թե ինչու հայ իշխանի թագադրումը կորցրել էր իր հրատապությունը խաչակիրների համար, այլապես Լևոն Բ-ը թագավոր կհռչակվեր հենց 1190-ին:

Ինչ վերաբերում է Ֆրիդրիխ կայսեր վախճանին, ապա պատմիչների հաղորդումների միջև մեծ չեն տարբերությունները. մի դեպքում ասվում է, որ նա իր ընկերակիցների հետ անցնում էր Սելևկիա գետը, և երբ հորձանքը իր ընկերակիցներից մեկին քշեց տարավ, կայսրը փորձեց օգնել նրան, բայց ինքն էլ հորձանքով քշվեց ու խեղդվեց[8], կամ որ գետի մեջ լողացավ, բայց ջուրը սառն էր, մրսեց և մի քանի օր անց մահացավ[9], կամ որ մտավ ջուրը լողալու, և չնայած որ մի տեղում էին, որտեղ ջուրը մարդու մեջքին չէր հասնում, Ֆրիդրիխը խեղդվեց[10]:

Չնայած ոչ մեծ տարբերություններին, էությունը նույնն է՝ Ֆրիդրիխը խեղդվեց կամ մեռավ Սելևկիա գետում կամ նրա ափին: Այս գետը Իսավրիայի և Կիլիկիայի կամ Սելջուկյան սուլթանության և Հայոց Ռուբինյան իշխանապետության սահմանն էր:

Ֆրիդրիխի փոխարեն բանակի գլուխ կանգնեց նրա որդին՝ Ֆրիդրիխ Կրտսերը, որը Մամեստիայի և Տարսոնի վրայով անցավ Անտիոք, որտեղ էլ թաղեցին Ֆրիդրիխ Շիկամորուսին: Ապա գերմանացի խաչակիրները շարունակելով իրենց ուղին՝ գնացին միացան Ակրան պաշարող մյուս խաչակիրներին: Այստեղ մեռավ նաև Ֆրիդրիխ Կրտսերը:

Այս բոլոր անցքերի նկարագրության մեջ այլալեզու պատմիչների հաղորդումները հիմնականում նույնն են կամ լրացնում են միմյանց: Հիմնական վիճելի հարցը, որի շուրջ վերջին ավելի քան 200 տարում ուսումնասիրողներն ունեցել են իրարամերժ կարծիքներ, Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի 1190 թ. նամակն է (կամ նամակները)՝ ուղղված Սալահ ադ-Դին Այյուբիին: Այդ մասին հիշատակում են միայն արաբ պատմիչները և առաջին հերթին XII–XIII դարերի արաբ նշանավոր

---

[6] *Չ ա մ չ ե ա ն ց, հ.Գ, էջ 158:*

[7] *Ի բ ն ա լ - Ա ս ի ր. թարգմ., առաջաբան և ծանոթագր. Արամ Տեր-Ղևոնդյանի.– Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ, Բ, Երևան, 1981, էջ 275:*

[8] *Վ ա ր դ ա ն, էջ 179:*

[9] *Յ ա կ ո ւ տ ա լ - Հ ա մ ա վ ի, Ա բ ո ւ լ - Ֆ ի դ ա, Ի բ ն Շ ա դ դ ա դ, կազմեց Հ. Նալբանդյան.– Արաբական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին (այսուհետև՝ Ի բ ն Շ ա դ դ ա դ), Երևան, 1965, էջ 296:*

[10] *Ի բ ն ա լ - Ա ս ի ր, էջ 275:*

դատավոր ու պատմիչ Բեհա ադ-Դին Իբն Շադդադը իր «Սալահ ադ-Դին Այյուբիի կենսագրությունը» գրքի[11] մեջ:

Վերոհիշյալ երկում մեջբերված նամակում կաթողիկոսը նկարագրում է Ֆրիդրիխ Շիկամորուսի բանակի առաջխաղացումը մինչև Կիլիկիա, նրանց բախումները բյուզանդացիների, թուրքմենների և Իկոնիայի սելջուկների հետ: Ապա աշխատում է ամեն կերպ իրեն ու Լևոն Բ-ին ներկայացնել որպես Սալահ ադ-Դինի բարեկամ և դաշնակից: Կաթողիկոսը գրում է, որ երբ Կիլիկիայում ստանում են Ֆրիդրիխ կայսրի նամակը, նրա մոտ են ուղարկում ոմն Հաթիմի (երևի Հեթում) իբրև պատվիրակ և սրա հետ բարձրաստիճան անձնավորություններ: Նրանք իրենց հետ տանում էին հայերի պատասխան նամակը, որով խորհուրդ էր տրվում «ալմանների» (գերմանացիների) թագավորին հետ դառնալ Կըլըչ Արսլանի երկիրը[12]: Իր նամակի մեջ վեհափառը գրում է, որ Ֆրիդրիխ կայսրի մահից հետո նրա որդին է անցնում զորքի գլուխ և մտնում Կիլիկիա: Լևոնը սկզբում քաշվում է իր բերդերից մեկը, բայց «Ալմանների թագավորի որդին» սպառնում է գրավել նրա երկիրը, եթե հակառակվի: Եվ կաթողիկոսը, կարծես փորձելով արդարացնել Լևոնին, ավելացնում է. «Լևոնի որդին[13] հարկադրվեց տեղի տալ և գնալ դիմավորել թագավորին: Արդարև նա (Ֆրիդրիխ Շիկամորուսը) գտնվում էր մի մեծաթիվ բանակի գլուխ, որը հավաքել էր արշավանքի համար: Այդ բանակը բաղկացած էր քառասուն հազար հեծյալից և անթիվ հետևակից՝ բաղկացած այլազգի ժողովուրդներից…»[14]: Գրիգոր Տղան նամակի վերջում պատրաստակամություն է հայտնում, եթե մի նոր բան պատահի, այդ մասին տեղեկացնել Սալահ ադ-Դինին:

Անկասկած, Իբն Շադդադի հաղորդումը պարունակում է շատ ուշագրավ տեղեկություններ, որոնք որոշակի լույս են սփռում Կիլիկիա–խաչակիրներ և Կիլիկիա–Այյուբյաններ հարաբերությունների վրա, իսկ նամակը կարող է համարվել հայ միջնադարյան դիվանագիտության մի եզակի նմուշ: Մինչդեռ ուսումնասիրողներից ոմանք այն համարել են կեղծիք, պատմիչի կողմից հորինվածք, կաթողիկոսի և մի այլ անձի միջև շփոթության արդյունք, իսկ այն խումբն էլ, որ ընդունել է նամակի հավաստիությունը, իրարամերժ ձևով է գնահատել այն գրելու դրդապատճառներն ու նպատակները:

Այս զարմանալի բազմակարծության մեջ կողմնորոշվելու և դրա խորքային պատճառները հասկանալու համար անհրաժեշտ է պարզել արմատները: Երկար ժամանակ Եվրոպայում տիրապետող է եղել հայ–խաչակիր զինակցությունը իդեալականացնելու, հովվերգության տեսքով ներկայացնելու մի սովորություն, որը, անկասկած, իր դրոշմն է դրել նաև Կիլիկիայի պատմության ուսումնասիրության վրա: Այն առավել տիրապետող է եղել XVIII դարի վերջից մինչև XX դարի սկիզբը: Հայր Միքայել Չամչյանցը, հայր Ղևոնդ Ալիշանը, Ֆրանսուա

---

[11] B a h a a d - D i n I b n S h a d d a d. Min Kitab an-Nawadir as-Sultaniya wa Mahasin al-Yusufiya. Dimashq, 1979, pp. 182–186.

[12] *Ի բ ն Շ ա դ դ ա դ, էջ 294–297:*

[13] *Արաբ պատմիչները Ռուբինյաններին հաճախ կոչում էին «Իբն Լևոն» կամ «Լևոնյաններ»՝ ըստ երևույթին նկատի ունենալով Լևոն Ա իշխանապետին (1137–1145):*

[14] *Ի բ ն Շ ա դ դ ա դ, էջ 294–297:*

Տուրնբրիզը, մասամբ նաև Ռընե Գրուսեն և ուրիշներ, այս կամ այն չափով, տուրք են տվել «գովերգումի» այս տեսությանը, հաճախ նաև մեկը մյուսին հետևելով: Այդ տեսակետների համախմբումով՝ ձևավորվում է մոտավորապես այսպիսի մի պատկեր.

– Կիլիկիայի հայերը իրենք բազմիցս դիմել են Հռոմի քահանայապետերին ու քաջալերել՝ կազմակերպելու խաչակրաց արշավանքներ,

– առանց վերապահության, ամբողջական ու բոլորանվեր աջակցություն են ցուցաբերել խաչակիրներին,

– և վերջապես՝ զենքով ու գորքով (գուցե և հենց Լևոն Բ-ի գլխավորությամբ) մասնակցել են թե՛ Ակրայի (Պաղեստին) ազատագրմանը և թե՛ Կիպրոսի վրա արշավանքին:

Իրականում այս բոլորի միայն փոքր մասն է հաստատվում աղբյուրներով:

– Նախ, առաջին խաչակրությունից հետո անցած ավելի քան 90 տարիների ընթացքում (1098–1190) հսկայական փոփոխություն էր կրել հայության վերաբերմունքը խաչակիրների հանդեպ, և առաջին արշավանքի ժամանակ տիրապետող խանդավառությանը փոխարինել էր վերապահ և զգույշ մոտեցումը: Իսկ ինչ վերաբերում է իշխանապետի ու կաթողիկոսի՝ Հռոմի պապերին ուղղված նամակներին, ապա դրանց նպատակը եղել է թագ ստանալը, բայց ոչ խաչակրության կոչ անելը:

– Կիլիկիայի հայերի խաչակիրների 3-րդ արշավանքին մասնակցելու վերաբերյալ աղբյուրները լռում են: Սակայն որոշ ուսումնասիրողներ, վկայակոչելով միջնադարյան գերմանացի մի բանաստեղծի գրությունը, հնարավոր են համարում այդ զինակցությունը: Վերոհիշյալ աղբյուրը Ակրան (Աքքա) գրավող թագավորների շարքում հիշում է նաև

Լևոն թագավոր Ուբիայի
Ինչպես նաև Հայաստանի[15]*:*

Հիշատակությունը, մեր կարծիքով, հիմք չի տալիս հեռուն գնացող ենթադրությունների համար: Այն գրված է գեղարվեստական մի երկի մեջ, որտեղ չի բացառվում, որ խաչակիրներին Կիլիկիայում հյուրընկալած իշխանը «վերածվեր» Ակրան գրավող քաջարի քրիստոնյա միապետի: Ամեն դեպքում, ըստ երևույթին, հենց այս հիշատակումն է վերոհիշյալ ուսումնասիրողներին մղել կառուցելու մի ողջ տեսություն, ապա նաև մերժելու կամ անտեսելու դրան հակասող բոլոր տեղեկությունները:

Հայր Միքայել Չամչյանցը իր «Հայոց Պատմութեան» մեջ չի անդրադառնում Գրիգոր կաթողիկոսի նամակին, միաժամանակ ամբողջությամբ դյուրասահ ու պայծառ պատկեր է տալիս Ֆրիդրիխի և հայ վերնախավի հարաբերությունների մասին: Թեև օգտագործում է Վարդան պատմիչի գործը, բայց անտեսում է Լևոն Բ-ի զգուշավորության մասին վկայող կետերը:

---

[15] *Ղ. Ա լ ի շ ա ն. Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 449:*

Հաջորդ պատմիչը հայր Ղևոնդ Ալիշանն է, որն իր նշանավոր «Սիսուանում» գրեթե զայրույթով է խոսում իր կարծիքով Գրիգոր Դ-ին վերագրվող նամակի մասին. «Այլ ընդ այլոց և ստութեամբ պատմեն աստանօր Արաբացիք, դժկամակս ցուցանել զՀայս ընդ գալուստ Ալամանացն և ընդ անցս յերկիր իւրեանց, և զայս իբրու առ ահի կամ առ մտերմութեան Սալահէտտինայ և մեծագոյն ևս ստայօղ թուղթ մի կարկատեալ են յանուն Գրիգորի, որդւոյ Վասլի, որպէս թէ կաթողիկոսին Գր. Տղայոյ, առ Սալահէտտին, լրտեսաբար ծանուցելով նմա զորքանութիւն բանակին Ալամանաց, զարկածս կայսերն և զոր յետ այնր»[16]: Հայր Ալիշանն ավելացնում է, որ դա այնքան հեռու էր Գրիգոր կաթողիկոսի և Լևոն իշխանի մտքից ու գրչից, որ հնարավոր չէ նույնիսկ պատկերացնել, որ նրանք այդպիսի մի, իր խոսքերով, «մատնիչ» նամակ կարող էին գրել: Դժվար է ասել, թե Ալիշանը արաբերեն բնագիրն է կարդացել, թե դրա ոչ այնքան ճշգրիտ թարգմանությունը, բայց մի հանգամանք նրան շփոթության մեջ է գցել: Ահա թե ինչ է ասում Ալիշանը. «…կամ որպէս գրէ Պոհաէտտին պատմիչ նոցա, Գագկայ (Գայգուս) որդւոյ Գրիգորի, որդւոյ Վասլի, հրամանատարի Հռոմկլայ»[17]:

Մինչդեռ Իբն Շադդադը որևէ տեղ Գագիկ անունը չի գործածում, իսկ թարգմանիչը այդպես է կարդացել նրա նշած «Քաղիկոս», որ նույնն է «Կաթողիկոս» բառը, որի իմաստը շատ լավ գիտե նաև արաբ պատմիչը, բացի այդ նա ճշգրտությամբ նշել է նաև «Տղա» մականունը: Նամակի վերջում Իբն Շադդադը գրում է. «Սա է նամակը կաթողիկոսի, և այս բառը նշանակում է խալիֆա. նրա անունն է Բար Քրիքուր իբն Բասիլ» այսինքն՝ «Գրիգոր Տղա որդի Վասիլի»[18]: Ուշագրավ է հետևյալը. ասորերեն «բար» և արաբերեն «իբն» նույնիմաստ բառեր են. նշանակում է «տղա, որդի», բայց պատմիչը, շփոթությունից խուսափելու համար, «Տղա» մականունը թարգմանել է «Բար», իսկ արաբերեն «իբն»-ով նշել, որ նա Վասիլի որդին է:

«Սիսուանի» հրատարակությունից 15 տարի անց՝ 1900 թ., ֆրանսիացի հայագետ Ֆրանսուա Տուրնբիզը իր «Հայաստանի քաղաքական և կրոնական պատմությունը» գրքում, հետևելով հայր Ալիշանին, հաստատելով նրա կարծիքը և էլ ավելի խորացնելով այն, գրում է. «Սա արդյունքն է Գրիգոր Դ Տղայի և Լևոն Բ-ի դեմ մի ծանր մեղադրանքի: Այն դեպքում երբ սրանք, թե մեկը և թե մյուսը, քաջալերում էին Կոմեմ Գ և Կելեստինոս Գ պապերին՝ կազմակերպելու խաչակրաց արշավանք, մինչ Գրիգորը Ներսես Լամբրոնացու և Լևոնի այլ դեսպանների հետ միասին գնում էր դիմավորելու Ֆրիդրիխ Շիկամորուսին, այդ նույն կաթողիկոսը ստրկահաճ մի նամակ էր գրել Սալահ ադ-Դինին՝ հաղորդելով կայսրի վիճակի ու ծրագրերի մասին»[19]:

Այստեղ, արդեն իսկ եղած միակողմանի մոտեցմանը, ավելացված է նաև այն միտքը, որ իբր թե Գրիգոր Տղան ու Լևոն իշխանապետը քաջալերել են պապերին կազմակերպելու խաչակրություն: Մի բան, որի համար ոչ մի հիմք չունենք:

---

[16] *Նույն տեղում, էջ 447:*

[17] *Նույն տեղում:*

[18] *Ի բ ն Շ ա դ դ ա դ, էջ 297:*

[19] F. T o u r n e b i z e. Histoire politique et religieuse de l'Armenie. Paris, 1900, p. 185.

Եվս երեքուկես տասնամյակ անց արևելագետ Ռընե Գրուսսեն իր նշանավոր «Խաչակրաց արշավանքների պատմության» Գ հատորում թեև կասկածի տակ չի դնում Գրիգոր կաթողիկոսի նամակը՝ ուղղված Սալահ ադ-Դինին, սակայն դրա ուղարկման դրդապատճառներին բոլորովին այլ բացատրություն է տալիս[20]*: «Լևոն Բ Հայոց իշխանն ու նրա կաթողիկոսը արդեն Սալահեդդինի արքունիք էին ուղարկել ճարտարությամբ շարադրված նամակներ, որոնք իրագեկելու պատրվակի տակ, նպատակ էին հետապնդում բարոյական ճնշում գործադրել նրա վրա և հուսալքել նախքան պատերազմը»*[21]*:*

Այս ենթադրությունը համոզիչ չէ, քանի որ եթե կաթողիկոսի նպատակը միայն Սալահ ադ-Դինի բանակը պարտված տեսնելն էր, ապա տրամաբանական կլիներ, եթե նա վարվեր ճիշտ հակառակ կերպ: Նա կամ ոչինչ չէր հաղորդի մահմեդականներին, կամ էլ կգրեր, որ խաչակիրները փոքրաթիվ են և թույլ, թերևս այդ ձևով փորձելով թյուրիմացության մեջ պահել նրանց: Այնինչ, ըստ մի այլ արաբ պատմիչ Աբու Շամայի տեղեկության, կաթողիկոսի այս նամակը, փաստորեն, ահազանգի դեր է կատարում Սալահ ադ-Դինի համար: Աբու Շաման գրում է. «Երբ այս լուրը տեղ հասավ և իմացվեց, որ վիճակը վտանգավոր է, մարդիկ իրար անցան…: Ռումի երկիրը հետախույզներ (բնագրում՝ աչքեր) և լրտեսներ ուղարկեցին և դեսպաններ՝ օգնություն խնդրելով…»[22]*:*

Վերջապես՝ կաթողիկոսի նամակում խաչակրաց բանակի սարսռազդու ձևով ներկայացումը և զինվորների նկարագրությունը որպես խստապահանջ ու մոլեռանդ ռազմիկներ, ընդամենը նպատակ ուներ արդարացնելու Լևոնի կեցվածքը այդ հսկա ուժի առջև և թեկուզ դժկամությամբ, բայց և այնպես ցույց տրված աջակցությունը խաչակիրներին: Այս հանգամանքը նկատել է նաև Հ. Քյուրդյանը[23]*:*

Մահմեդականներին հուսալքելու ենթադրությունը համոզիչ չի թվում, հատկապես, երբ կարդում ենք Իբն Շադդադի հաղորդման շարունակությունը. «Այն ժամանակ կաթողիկոսի կողմից սուլթանի մոտ հասավ մի երկրորդ պատվիրակություն և նա տվեց տեղեկություններ՝ ասելով, որ նրանց թիվը շատ մեծ է, բայց շատ են տկարացած և քիչ ձիեր ու պաշար ունեն և իրենց գույքերի մեծ մասը էշերի վրա էին փոխադրում: Նա ասաց. «Ես կանգնեցի մի կամրջի վրա, որի վրայով նրանք պետք է անցնեին, որպեսզի կարողանամ դիտել նրանց. տեսա, որ քչերը միայն զենք կամ նիզակ ունեին, և երբ նրանց հարցում տվեցի, թե ինչ է դրա պատճառը, պատասխանեցին, թե երկար օրեր վատառողջ վայրում մնացած լինելով, առանց ուտեստի և վառելանյութի շատերը մահացել են ծայր աստիճան թշվառությունից, և իրենք ստիպված են եղել մորթել ձիերը և ուտել, այրել են նիզակները և զենքերի փայտերը. իսկ առաջապահները, որոնք մինչև Անտիոք են հասել՝ մեռել են»[24]*:*

---

[20] R. G r o u s s e t. Histoire des Croisades, t. III. Paris, 1936, pp. 15–16.

[21] *Լ. Տ ե ր - Ղ ե տ ր ո ս յ ա ն. Խաչակիրները և հայերը, հ. 1, Երևան, 2005, էջ 284 :*

[22] A b u S h a m a. Ar-raudatayn fi akhbar ad-daulatayn, t. II. Beyrouth, 1974, p.150.

[23] *Հ. Ք յ ո ւ ր դ յ ա ն. Գրիգոր Տղա և Սալահ էդ-Տին.– «Բազմավեպ», 1975, թիվ 1-2, էջ 177:*

[24] *Ի բ ն Շ ա դ դ ա դ, էջ 299:*

Այս հաղորդումից պարզ է դառնում, որ կաթողիկոսը ուղարկել է մի երկրորդ պատվիրակություն, բայց պարզ չէ, թե առաջին դեմքով մեջբերված խոսքերը արդյոք վերցված են կաթողիկոսի մի երկրորդ նամակից, թե այն անձամբ և բերանացի փոխանցել է պատվիրակության անդամներից մեկը, անշուշտ, հետևելով Գրիգոր կաթողիկոսի հանձնարարականներին: Ընդ որում պատմիչը՝ Իբն Շադդադը, այդ հանդիպմանը (երևի Հալեբում) անձամբ ներկա է եղել և իր գրքում վկայում է իբրև ականատես:

XX դարի 20–50-ական թվականներին խորհրդային պատմագրության ավանդույթները ևս որոշակի ազդեցություն ունեցան խնդրո առարկայի լուսաբանման համար, այս անգամ արդեն, ճիշտ հակառակ իմաստով, այսինքն՝ խաչակիրները մշտապես համեմատվում էին եվրոպական գաղութարարների հետ, հետևաբար ներկայացվում միայն բացասական գծերով: Սա տանում էր մի այլ ծայրահեղության:

Այդ շրջանում Հայաստանում քիչ են եղել Կիլիկիայի պատմությանը նվիրված ուսումնասիրություններ: Դրանցից, անկասկած, կարևորագույնը Գրիգոր Միքայելյանի «Կիլիկիայի հայկական պետության պատմություն»[25] կոթողային աշխատությունն է, որտեղ որոշ չափով տուրք է տրված խորհրդային մոտեցմանը: Բայց հենց դա էլ թույլ է տվել հեղինակին ամենայն լրջությամբ վերաբերվելու Իբն Շադդադի հիշատակած կաթողիկոսական նամակին: Այս առումով Գրիգոր Միքայելյանն առաջինն էր, որ առանց նախապաշարումների է մոտենում այս խնդրին՝ Գրիգոր Տղայի նամակը գնահատելով որպես հավաստի գրություն:

Վերջին 40–50 տարիների ընթացքում, թե Հայաստանում և թե արտասահմանում հրատարակվեցին գրքեր ու հոդվածներ, որտեղ ընդհանուր առմամբ հավասարակշռված, անաչառ մոտեցում է ցուցաբերվում խաչակիրներ–մահմեդականներ հակամարտությանը, զերծ վերոհիշյալ երկու հոսանքների (հայ-խաչակիր հովվերգությունը գովերգող և խաչակիրներին որպես գաղութարարներ ընկալող) ազդեցությունից:

Այս առումով (այսինքն՝ հավասարակշիռ մոտեցումով) առաջին հերթին հիշատակության արժանի է Հ. Քյուրդյանի «Գրիգոր Տղա և Սալահ էդ - Տին» հոդվածը, հրատարակված Վենետիկի «Բազմավեպ»-ում 1975 թ.: Հետագայում նույն մոտեցումն եմ ցուցաբերել 1989-ին «Կիլիկյան Հայաստանն ու Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145–1226 թթ.» թեկնածուական թեզի մեջ (գրքով հրատարակված 1994-ին Երևանում): Ֆրանսահայ հետազոտող Կլոդ (Արմեն) Մութաֆյանը Կիլիկիո պատմությանը նվիրված իր աշխատանքներում[26] ևս ամբողջովին անհիմն է համարում Գրիգոր Տղայի նամակի վավերականության վերաբերյալ կասկածները: Վերջապես, նորերս, Լևոն Տեր-Պետրոսյանի հրատարակած երկհատոր «Խաչակիրները և հայերը» աշխատության առաջին հատորի ծանոթագրություններում ևս պաշտպանվում է նույն տեսակետը[27]:

---

[25] Г. Г. М и к а е л я н. История Киликийского армянского государства. Ереван, 1952.

[26] C. M u t a f i a n. La diplomatie armenienne au Levant a l'epoque des croisades XII-XIV siecle.These de doctorat, Universite Paris I, Pantheon-Sorbonne, Juin, 2002, p.68.

[27] *Լ. Տ ե ր - Պ ե տ ր ո ս յ ա ն. Խաչակիրները և հայերը, հ. 1, էջ 447–449:*

Պատմաբան Ջոշուա Փրաուերը մեջբերում է խաչակիր առաջնորդների դիմումը Ուրբանոս պապին. «Մենք հաղթեցինք թուրքերին ու հեթանոսներին, բայց չկարողացանք պարտության մատնել հերետիկոսներին՝ հույներին ու հայերին, ասորիներին ու հակոբիկներին»[28]: Հենց միայն այս նախադասությունը պերճախոս վկայությունն է, թե բացասական ինչպիսի վերաբերմունք ունեին խաչակիրները Մերձավոր Արևելքի քրիստոնյաների հանդեպ:

Հիշատակության արժանի է խաչակիրների մասին Մաղաքիա արք. Օրմանյանի արտահայտությունը. «Իբր թե քրիստոնեության պաշտպանության եկողներ էին, բայց քրիստոնեից օգնությամբ զորանալե ետքը, արևելյան քրիստոնեից դեմ կը դառնային, անոնց երկիրներուն տիրապետելու և անոնց հարստությունները գրավելու նպատակով»[29]:

Բայց և այնպես, հանուն ճշմարտության պետք է նշել, որ առնվազն առաջին խաչակրաց արշավանքը անուղղակիորեն նպաստավոր եղավ հայկական իշխանությունների համար: Վերջիններիս համար այդ ժամանակ ամենամեծ վտանգը սպառնում էր փոքրասիական սելջուկներից: Նիկիայի և Դորիլեումի ճակատամարտերում խաչակիրները ջախջախիչ հարված հասցրին սելջուկներին, դրանով իսկ երկար ժամանակով հեռացնելով սելջուկյան վտանգը հայկական կազմավորումներից և, անշուշտ, ցնծությամբ դիմավորվեցին ու օգնություն ստացան հայկական իշխանություններից: Բայց երբ հաստատվեցին ու ստեղծեցին իրենց պետական միավորները, իրենք դարձան վտանգ հայկական փոքրիկ իշխանությունների համար: Գրեթե ամբողջ Դաշտային Կիլիկիան ու Եփրատացվոց աշխարհի հայաբնակ տարածքները երկար ժամանակ մնացին Անտիոքի իշխանության ու Եդեսիայի կոմսության տիրապետության տակ, բացի դրանից խաչակիրները կարճ ժամանակում վերացրին ու տիրացան հայկական մի քանի փոքր իշխանությունների տիրույթներին: Բայց և այնպես աստիճանաբար հզորացող Ռուբինյան իշխանների համար խաչակիրների հետ դաշինքը, առնվազն առաջին մի քանի տասնամյակներում, կարևոր նշանակություն ուներ, մանավանդ որ մահմեդական ամիրությունները խիստ թույլ ու մասնատված էին մինչև Մոսուլի աթաբեկ Իմադ ադ-Դին Զանգիի հանդես գալը: Հատկապես նրա որդու՝ Նուր ադ-Դինի օրոք իրավիճակը կտրուկ փոխվեց:

1156–1164 թթ. ընթացքում խաչակիրների՝ հիմնականում անհաջող ռազմական ձեռնարկումները ցույց տվեցին նրանց հետ դաշինքի անհեռանկարությունը: Հայ իշխաններն արդեն չէին կարող իրենց ապահով զգալ որպես խաչակիրների դաշնակիցներ: Այս ամենը ստիպեց Թորոս Բ-ին իր իշխանության վերջին տարիներին (1164–1169) չեզոք քաղաքականություն վարել ինչպես Նուր ադ-Դինի, այնպես էլ խաչակիրների նկատմամբ: Համենայն դեպս, մեր դիտարկումներն այդ են ապացուցում: Մլեհի իշխանապետի օրոք (1170–1175) հայ–խաչակիր դաշինքը վերջնականապես խզվեց: Կիլիկյան Հայաստանը դարձավ Զանգիների պետության դաշնակիցը: Ընդ որում, Մլեհի օրոք Ռուբինյան իշխանապետութ-

[28] J. P r a w e r. The Crusaders' Kingdom: European Colonialism in the Middle Ages. London, 2001, p. 214.

[29] *Մ. Օ ր մ ա ն յ ա ն. Ազգապատում, հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 1339:*

յունը կարողացավ շոշափելի հարված հասցնել միաժամանակ Բյուզանդիային, խաչակիրներին և Իկոնիայի սելջուկներին: Մլեհի հաջորդ՝ Ռուբեն Գ-ի օրոք վերականգնվում են հարաբերությունները խաչակիրների հետ, բայց սրանք արդեն բոլորովին այլ բնույթի հարաբերություններ էին: Վաղուց արդեն չկար նախկին հիացական վերաբերմունքը հավատակիցների հանդեպ: Դրան փոխարինել էր սթափ հաշվարկն ու Կիլիկիայի ազգային-պետական շահերի գիտակցումն ու այդ տեսակետից հարաբերությունների կառուցումը բոլոր հարևան երկրների հետ: Առավել ևս, որ Ռուբեն Գ-ի և մանավանդ Լևոն Բ-ի օրոք Կիլիկյան Հայաստանը նախկինից ավելի ընդարձակ ու հզոր պետություն էր, որի հետ դաշինքը կարող էր նաև որոշակի դեր խաղալ խաչակիրներ–մահմեդականներ մեծ հակամարտության մեջ:

Ահա այս ամենից հետո բոլորովին արտառոց չէ Լևոն Բ-ի հետ համաձայնեցված ձևով Գրիգոր Դ-ի ուղարկած նամակները Սալահ ադ-Դինին: Մանավանդ որ կան Ֆրիդրիխ Շիկամորուսի ու նրա բանակի հանդեպ Լևոն Բ-ի վերապահության ու զգուշավորության բազմաթիվ վկայություններ: Հենց նույն Լևոն Բ-ն արդեն թագավոր հռչակվելուց հետո բոլորովին էլ չի խուսափում Այյուբյան սուլթանության հետ հարաբերություններից, ընդհակառակը ինքն է դառնում այդ կապերի հաստատման նախաձեռնողը: Հիշատակության արժանի է, որ առնվազն 1208–1216 թթ. Լևոն Բ-ը նամակագրություն ու բարեկամական հարաբերություններ է հաստատում Սալահ ադ-Դինի եղբայր և Եգիպտոսի սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլի հետ, որի շնորհիվ ռազմաքաղաքական մի շարք կարևոր հարցեր է կարողանում լուծել հարևան երկրների հետ: Այս մասին բացառիկ տեղեկություններ է հաղորդում արաբ պատմիչ Քամալ ադ-Դին Իբն ալ-Ադիմը[30], որը, սակայն, դուրս է մեր հոդվածի նյութից:

Գրիգոր կաթողիկոսի նամակի մասին հիշատակում են երեք արաբ պատմիչներ: Նրանցից առաջինը Բեհա ադ-Դին Իբն Շադդադն (XII–XIII դդ.) է նշում իր «Սալահ ադ-Դին Այյուբիի կենսագրությունը»[31] գրքում. այն գրեթե նույնությամբ, չնչին փոփոխություններով մեջբերում է XIV դ. եգիպտացի պատմիչ Իբն ալ-Ֆուրաթը իր «Պատմության»[32] մեջ, իսկ XIII դ. դամասկոսցի պատմիչ Աբու Շաման իր «Գիրք զույգ պարտեզների»[33] երկում համառոտ վերապատմում է կաթողիկոսի նամակը:

Մեր հիշատակած բոլոր ուսումնասիրողները զանց են առել կամ ընդհանրապես տեղյակ չեն եղել Իբն ալ-Ֆուրաթի հաղորդման մասին, իսկ Աբու Շամային անդրադարձել է միայն Գրիգոր Միքայելյանը, այն էլ՝ հպանցիկ: Փորձենք այս երեք պատմիչների հաղորդումները համատեղելով առավել ամբողջական պատկեր ստանալ հարցի վերաբերյալ:

---

[30] Histoire d'Alep par Kamal ad-Din Ibn al-Adim, ed.Sami Dahan, Institut Francais de Damas, t. III. Damas, 1968, pp. 159-160.

[31] B a h a a d - D i n I b n S h a d d a d. Min Kitab an-Nawadir as-Sultaniya wa Mahasin al-Yusufiya. Dimashq,1979, pp.182-186.

[32] I b n a l - F u r a t. Tarikh ad-Duwal wa l-Muluk, t. IV, ed. Hasan Muhammad al-Shamas. Basra. 1967, pp. 216-219.

[33] A b u S h a m a. Ar-raudatayn fi akhbar ad-daulatayn, t. II. Beyrouth, 1974, p. 150.

Բեհա ադ-Դին իբն Շադդադը ծնվել է 1145 թ. Մոսուլում և վախճանվել 1235 թ. Հալեբում: Նա այդ անցքերի ժամանակակիցն է: Նա հասուն անձնավորություն էր, շուրջ 45 տարեկան, երբ Ֆրիդրիխ Շիկամորուսի բանակը Կիլիկիայի դռների մոտ էր: Իբն Շադդադը բարձր պաշտոններ է վարել Մոսուլի աթաբեկների, Բաղդադի խալիֆայի և, վերջապես, Սալահ ադ-Դինի մոտ: 1188 թ. Սալահ ադ-Դինը նրան ծառայության է վերցրել՝ հիացած «Հաղիսների» իր իմացությամբ և Ջիհադի մասին մի աշխատանքով, որ նա ձոնել էր սուլթանին: Դրանից հետո Իբն Շադդադը իր ողջ կյանքում ծառայել և ուղեկցել է Սալահ ադ-Դինին, իսկ վերջինիս մահից հետո գրի առել սուլթանի կենսագրությունը:

1195 թ. Սալահ ադ-Դինի որդին՝ ալ-Մալիք ազ-Զահիրը Իբն Շադդադին նշանակել է Հալեբի դատավոր, նաև «վաքֆ» հողերի վերահսկողությունը վստահելով նրան: Բազմաթիվ անգամներ նա ուղևորվել է Կահիրե՝ Այյուբյան ընտանիքի ներքին վեճերը հարթելու համար: Իբն Շադդադը ապրել է մինչև խոր ծերություն և ուներ մի շարք նշանավոր աշակերտներ ու հետևորդներ (ինչպես, օրինակ, «Կենսագրական բառարանի» նշանավոր հեղինակ Իբն Խալլիքանը): Այդ աշակերտներից էր Աբու Շաման, որը նաև գրել է Իբն Շադդադի կենսագրությունը:

Իբն Շադդադը հեղինակ է առնվազն հինգ տարբեր բնույթի աշխատանքների, որոնցից ամենանշանավորը հենց մեզ հետաքրքրող «Սալահ ադ-Դինի կենսագրությունն» է: Ընդ որում ինքը՝ հեղինակը, նշում է, որ մինչև 1188-ի վերաբերյալ նյութերը քաղել է վստահելի ընկերների վկայություններից, իսկ սուլթանի վերջին հինգ տարիների կյանքը (1188-1193), այսինքն՝ հենց այն շրջանը, որ մեզ հետաքրքրում է, շարադրել է իր անձնական փորձի ու տեսածների հիման վրա: Ըստ «Իսլամի հանրագիտարանում» պատմիչին նվիրված հոդվածի հեղինակ Ջամալ էդ-Դին էլ-Շայյալի,[34] սա, թերևս, լավագույն աղբյուրն է Սալահ ադ-Դինի կյանքի ուսումնասիրության համար, հատկապես շեշտելով անձնական փորձով գրվածի առավել ճշգրտությունն ու վստահելիությունը:

Կասկած չկա, որ Լևոն Բ-ն ու Գրիգոր Դ-ը մշակել էին գործողությունների միասնական ծրագիր, կատարելով դերաբաշխում և դիվանագիտական իրենց ողջ հմտությունը գործի դնելով, ջանացել էին Կիլիկիան նվազագույն կորուստներով դուրս բերել վտանգավոր իրավիճակից: Հետաքրքիր է, որ թե՛ Ալիշանը, թե՛ Տուրնըբիզը և թե՛ Գրուսսեն, անկախ իրենց տված գնահատականներից, նամակի մասին խոսում են որպես այդ երկու հեղինակների գործ, թեև աղբյուրները նման հիշատակություն չունեն:

Կարելի է ասել, որ Լևոն Բ - Գրիգոր Դ զույգը միասնաբար կարողացավ վարել նուրբ դիվանագիտություն: Օգնություն հատկացնելով խաչակիրներին, միաժամանակ չմասնակցեցին նրանց արշավանքին և, այնուամենայնիվ, պահպանեցին բարեկամական կապերը լատինների հետ: Փորձեցին առավելագույն չափով չեզոք դիրք գրավել երկու մեծ տիրակալների ու նրանց բանակների միջև՝

[34] Ibn Shaddad, Baha al-Din Abu l-Mahasin Yusuf Ibn Rafi Ibn Tamim, author Gamal el-Din el-Shayyal, Extract from the Encyclopaedia of Islam CD-ROM Edition v. 1. 0, 1999 Koninklijke Brill NV. Leiden, the Netherlands.

Սալահ ադ-Դինի ապագա հնարավոր հակահարվածը կանխելու համար: Ավելին, ստեղծված իրավիճակում Լևոն Բ-ը ոչ միայն պահպանեց իր իշխանապետության դիրքերը, այլև նոր հողեր գրավեց: Մասնավորապես տիրացավ Սալահ ադ-Դինի բանակի կողմից լքված Բաղրաս (Գաստոն) ամրոցին, որը ռազմավարական շատ կարևոր դիրք ուներ: Այս մասին ահա թե ինչ է գրում Իբն ալ-Ասիր պատմիչը: Ըստ նրա, Սալահ ադ-Դինը հրամայեց քանդել ամրոցը (Բաղրասը), որը, ըստ պատմիչի, «մեծ վնաս էր մահմեդականներին, քանզի Հայոց տեր (Սահիբ ալ-Արման) Լևոնի որդին (Իբն Լայուն), որը սահմանակից էր, իր երկրից եկավ, նորոգեց ու կատարելագործեց այն և այնտեղ նշանակեց իր զինվորներից մի խումբ, որն այնտեղից ասպատակում էր դրացի երկիրը և սրանից շատ տուժեց Հալեբի շրջակայքի ժողովուրդը: Այն մինչև օրս էլ նրանց (հայերի) ձեռքում է»[35]:

1193-ին՝ Սալահ ադ-Դինի մահից հետո, Այյուբյան հսկա տերությունը բաժանվեց մի քանի մասի: Այդ ժառանգության տեր դարձան երեք որդիներն ու եղբայրը: Շուտով նրանց միջև սկսվեցին գահակալական կռիվներ: Այսպիսով, Կիլիկիան երկար ժամանակով ազատվեց վտանգավոր հարևանից:

1198-ին Տարսոնի Ս. Սոփիա եկեղեցում Լևոն Բ-ը հանդիսավորապես օծվեց «Թագավոր Հայոց»: Ռուբինյան տոհմի իշխանությունը Կիլիկիայում արժանացավ միջազգային լիարժեք ճանաչման: Այդ ճանապարհին հայ հոգևոր ու աշխարհիկ պետերը տասնամյակներ շարունակ մեծ ջանքեր էին գործադրել, անցել էին մի քանի բախտորոշ հանգրվաններով: Այդպիսի մի կարևոր հանգրվան էր Ֆրիդրիխ Շիկամորուս – Սալահ ադ-Դին պայքարը և Կիլիկիո վերնախավի վարած քաղաքականությունը:

Գրիգոր Տղայի և Լևոն Մեծագործի համաձայնեցված գործողություններն ու ճկուն դիվանագիտությունն է, որ կերտեցին հայոց նոր պետականությունը, որ պիտի գոյատևեր ևս երկու հարյուրամյակ:

ВНЕШНЯЯ ПОЛИТИКА КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ В КОНЦЕ XII ВЕКА

ВААН ТЕР-ГЕВОНДЯН

Р е з ю м е

Дипломатические усилия князя Левона II Рубенида и католикоса Григора IV в 1190–1191 гг., когда Киликия оказалась между армиями Фридриха I Барбароссы и Салах ад-Дина Аййуби, вывели страну из сложной обстановки и даже усилили ее положение в регионе. В дипломатической пере-

[35] *Իբն ալ-Ասիր, էջ 273:*

писке киликийцев исключительно важное значение имели послания католикоса Григора IV султану Салах ад-Дину, которые в историографии удостаивались самых разных, зачастую противоречивых оценок. Сведения арабских историков XII–XIV вв. (Ибн Шаддад, Абу Шама, Ибн ал-Фурат) подтверждают их достоверность и раскрывают тонкости армянской дипломатии конца XII в. Во многом благодаря этому, через несколько лет, уже в самом конце XII в. независимое царство в Киликии получило международное признание.

FOREIGN POLICY OF THE CILICIAN ARMENIA AT THE END OF THE 12th CENTURY

VAHAN TER-GHEVONDYAN

S u m m a r y

The diplomatic efforts of prince Levon II Rubenid and Grigor IV catholicos of Armenian church in 1190–1191, when Cilicia found itself between two hostile powers – German crusaders of the emperor Frederick I Barbarossa and the army of sultan Salah ad-Din Ayyubi rescued the country from complicated situation and even strengthened its position in the region. The letters of catholicos Grigor IV sent to Salah ad-Din have a unique importance in the diplomatic correspondence of the Cilician Armenians. The scholars have given very different, sometimes contradictory opinions about those documents. The reports of the Arab historians of the 12th–14th centuries (Ibn Shaddad, Abu Shama, Ibn al-Furat) confirm their authenticity and disclose the details of Armenian diplomacy at the end of the 12th century.